



Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Աշխատանքային խորհրդակցություն

Օգոստոսի 3-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը:

Մասնակցում էին ոստիկանության կոլեգիայի անդամները, կենտրոնական ապարատի եւ մարզային ստորաբաժանումների ղեկավարները:

Վերլուծելով հանրապետության օպերատիվ իրավիճակը, Վալերիյ Օսիպյանը առանձնահատուկ անդրադարձավ մարդու կյանքի, առողջության, ինչպես եւ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման միջոցառումներին: Մարզային վարչությունների եւ ձանապարհային ոստիկանության ղեկավարներին ցուցում տրվեց,

հատկապես հանգստի գոտիներում, ժամանցի վայրերում, այդ թվում՝ մայրաքաղաքից մարզեր տանող ավտո-

րացման խնդրին՝ նա նշեց, որ դրա հիմքում պետք է դրվի աշխատանքային ու կատարողական կարգապահության հետեւողական բարելավումը, խստապահանջ մոտեցումը կադրերի ընտրությանն ու գործառնությանը:

Վալերիյ Օսիպյանը բացահայտումների արդյունավետության բարձրացման համատեքստում խոսեց նախկինում կատարված հանցագործությունների բացահայտմանն ուղղված աշխատանքների ակտիվացման կարեւորության, նաեւ կանխարգելիչ միջոցառումների մասին:

Խորհրդակցության ավարտին ոստիկանության պետը կոնկրետ ցուցումներ եւ հանձնարարականներ տվեց ստորաբաժանումների ղեկավարներին:



ճանապարհներին ուժեղացնել ծառայությունը:

Ոստիկանության պետն ընդգծեց, որ իրավախախտների նկատմամբ անհրաժեշտ է լինել խիստ եւ սկզբունքային: Անդրադառնալով ծառայության արդյունավետության բարձ-

«Բժշկական» չարաշահումներ

Ոստիկանության ԿՅԴՊ գլխավոր վարչությունում օպերատիվ տվյալներ էին ստացվել Գեղարքունիքի մարզում կատարված մի շարք ապօրինությունների վերաբերյալ:



Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության ծառայողները պարզել են, որ 2009 թ., Գեղարքունիքի նախկին մարզպետի կարգադրությամբ, նախկին փոխմարզպետի կինը որպես վերստուգող է հրամանագրվել «Գավառ» բժշկական կենտրոնում եւ Լճափ, Ծովակ, Գանձակ համայնքներում գործող բուժամբուլատորիաներում, սակայն փաստացի աշխատանքի չի ներկայացել: Նրա անվամբ դուրս գրված 7 միլիոն դրամը հափշտակվել է:

Պարզվել է նաեւ, որ «Գավառ» բժշկական կենտրոնում 2017 թ. դեկտեմբերից 2019 թ. մայիս ընկած ժամանակահատվածում պետականների շրջանակներում անվճար բուժօգնություն ցուցաբերված քաղաքացիների անվամբ ստացված հիվանդների բժշկական քարտերում մտցվել են կեղծ տեղեկություններ, ինչի հետեւանքով պետական միջոցներից հափշտակվել է 3 միլիոն 126 հազար դրամ:

Քրեական գործ է հարուցվել:

Ուժեղացված ծառայություն մարզերում

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողները շարունակում են հանցագործությունների եւ իրավախախտումների կանխման ու բացահայտման, ինչպես եւ հասարակական կարգի պահպանությանն ուղղված ուժեղացված ծառայությունները:



Օգոստոսի 4-ին Գեղարքունիքի ոստիկանները ստուգման են ենթարկել 200-ից ավելի տրանսպորտային միջոց, որոնց վարորդներն իրենց գործողություններով կասկածի տեղիք են տվել: 55 վարորդ վարչական պատասխանատվության է ենթարկվել երթուղիների կանոնների կոպիտ խախտումների համար: Պահպանվող հատուկ տարածքներ են տեղափոխվել տասնյակ տրանսպորտային միջոցներ:

Տարբեր կասկածանքներով, ինչպես եւ հանրային վայրերում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու եւ ոստիկանների օրինական պահանջները չկատարելու համար բերման է ենթարկվել 20 անձ: Բացահայտվել են հանցագործության դեպքեր, հայտնաբերել անհետ կորած համարվող մեկ անձի:

Էջ 2

Պայթյուն Երևան-Սևան ճանապարհին

Օգոստոսի 2-ին, ժամը 12.20-ի սահմաններում, ոստիկանության Կոտայքի բաժնում ահազանգ ստացվեց, որ Երեւան-Սևան ճանապարհի 18-րդ կիլոմետրին պայթյուն է որոտացել, ինչի հետեւանքով վնասվել են այդ պահին ճանապարհով երթուղի «Ռենջ Ռովեր» եւ «Նիսան Պատրոլ» մակնիշի ավտոմեքենաներ:

մեկում կատարված զննությամբ հայտնաբերվեցին պայթյունը հեռակառավարելու համար նախատեսված տեխնիկական միջոցներ:

Ոստիկանության, ԱԱԾ եւ քննչական կոմիտեի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական եւ քննչական գործողությունների արդյունքում օպերատիվ տեղեկություններ ստացվեցին հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձանց ինքնության վերաբերյալ:

Դեպքից ժամեր անց մայրաքաղաքում հայտնաբերվեցին ու հիմնավոր կասկածանքով ոստիկանության Կոտայքի բաժնի բերման ենթարկվեցին երեք անձինք, որոնք կալանավորվել են:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են:



Ապօրինություններ Լոռու մարզում

Նամայքի ղեկավարը մի շարք որոշումներում կեղծել էր ավագանու անդամների ստորագրությունները: Էջ 3

Հանցանք եւ բռնություն

Ամեն տարի աշխարհում ավելի քան մեկուկես միլիոն մարդ բռնի մահվան զոհ է դառնում: Էջ 5

Մի «սիրտ» պատմություն

Ղանդուկի անհայտացված սիրտը հայտնաբերվել է: Էջ 6

Նախկին ղեկավարի ապօրինությունները

Ոստիկանության Ջերմուկի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Վայոց ձորի մարզի համայնքներից մեկի նախկին ղեկավարը պաշտոնավարման տարիներին ապօրինություններ է արել:



Նախնական տվյալներով՝ 2014 թվականին համայնքին պատկանող արտավայրերից 410 հազար դրամով 9,91 հեկտար հողատարածք է աճուրդով վաճառել որդուն: Նա էլ հողատարածքը մեկ տարի անց 147 միլիոն 300 հազար դրամով վաճառել է տարածքում գործող խոշոր ընկերություններից մեկին:

Նախաքննության ընթացքում համայնքի նախկին ղեկավարը վերականգնել է պետությանը պատճառած վնասից 50 միլիոն դրամ:

Բացահայտվել են չարաշահումներ

Ոստիկանությունը շարունակում է համագործակցված պայքարը ուսումնական հաստատություններում կոռուպցիոն բնույթի հանցագործություններ բացահայտելու ուղղությամբ: ԱԱԾ-ից ոստիկանության ԿՅԴՊ գլխավոր վարչությունում ստացված օպերատիվ տվյալների համաձայն՝ Հաղարծնի միջնակարգ դպրոցի տնօրենը թույլ է տվել մի շարք չարաշահումներ:



ԿՅԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները, համագործակցելով Տավուշի մարզային վարչության ու Դիլիջանի բաժնի աշխատակիցների հետ, փաստական տվյալներ են ձեռք բերել, որ Հաղարծնի միջնակարգ դպրոցի տնօրենը 2015 թ. դեկտեմբերից 2016-ի հուլիս որպես խմբավար գրանցել է Իջևանի քաղաքային մշակույթի տան նախկին փոխտնօրենին: Էջ 2

18-րդ դարի խաղաղագիտող	«Գայանե», «Սպարտակ» «...ի նշանը»	Կանաչ-դեղին Զայնահիշ	Ներքող ժո... Պարենյա-լին ջրկատ			Մարգ. ԲԳ	Հրեական լեզու	Պետրոս, Նիկոլայ	Զեռքի մաս		
Ռուս լուսավորիչ						Գետ, Մարկո Ջրաշուշ-ան			Զբոսայգի		
			Մարդու հասակ					Վերքի հետք			
Գլխարկ Տարե-ցույց								Վարդ, մե-խակ Նախնա-դարի ցուլ			

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչու-թյունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվ-տանցությունը, եթե դրանք պահպանությունը վստահեք ձեր բնակու-թյան վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար զանգվելիք վարձավճարները անհամե-մատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառա-նոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվ-ճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ: 120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամ-սական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արարիկ համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Փայտե գլանա-ծեւ անոթ	Կահույք	Հայկ. քաղցրա-համ ու-տեստ	«... գույնը»	Ուրարտ. աստված Քերծե, սպանիել			Իբսեն, պիես				Ստանուկ Վերա		
			Գերման. մաթեմա-տիկոս				Հանձար Ռուս կայսր				Սարմնի մաս		
«Ավրո-րա»							Դրո				Սենդվիչ-թերթ ... ղել Պլատա		
							Մոհամեդ ... Մանդոլին				Կոտայքի մարզի գյուղ		Մառլեն ...
Ֆուտու-րիզմի հիմնադի-րը			Կենդանու սնունդ	Ա. Բ. Գ Քաղաք, Տաջիկ-ստան							Քաջ ... Մասնե, օպերա		Զեզոք գագ
Բորողիճի օպերայի հերոս	Արյունա-տար անոթ կորուս-լին կղզի	Ֆրանս. նկարիչ	Թերու-թյուն							Սոմալի Հնոց	Գինի թել մա-նելու պի-տույք		
												Արբալե-տի մաս	
	Ճնշման միավոր					«Մտածո-ղը» Անգլ. դե-րասան						Ալյուրի շաղախ Գետ, Վիետնամ	
													Ուշահաս սերկելիլ
Չափում է ծովի խո-րությունը													Գոյական, ածական

Կսյու - Հազե-ցած շաբաթ է: Վճռական եք տրա-նսպորտ, սիրով ըն-դունում եք ճակատագրի մարտահրավերները:

Տնու - Հատկապես դժվար կլինի նրանց համար, ովքեր սովոր են աշխատել հու-սակ դաշնակիցների հետ:

Իերկվորյակ - Փոր-ծեք վերահսկել ձեր հուզական վիճակը: Եթե սովոր եք զգացմունքներին, ապա կիրառվեք սե-փական նպատակներից:

Ծեսեգետիմ - Պետք կգա այն, ինչ սովորեց եք նախկի-նում, իսկ այլոց խոր-հուրդները անօգուտ կլի-նեն: Ավելի շատ օգնեք ուրիշներին:

Ջարտ - Շարափա վերջը հաճելի

Մարտահրավեր

09.03.15.08

Մանկակներ եւ լավ ու-րություններ է խոստա-նում:

Մուսյա - Առավել պա-տասխանատու մո-տեցում ցուցաբերեք ցանկացած խնդիր լուծե-լիս:

Կշեք - Լավ գաղա-փարներ կառաջա-նան, որոնք կարող եք կյանքի կոչել ինքնու-րույն, չսպասելով աջակ-ցության:

Վարիմ - Շարափը լավ կանցնի, եթե զգույշ լինեք: Հակված եք

զ եր ա գ ն ա հ ա տ է լ ձեր հնարավորու-թյունները:

Մղեղնավոր - Ավելի լավ է պլանավորեք, թե ինչով եք զբաղվելու առաջիկա-յում: Շարափա կեսին խառը գործողություններ կլինեն:

Այծեղջյուր - Ու-ղեւորությունների ընթացքում կարող եք ստանալ նոր տպավորու-թյուններ, հաստատել հե-տադրքի ծանոթություն:

Ջրիւս - Հնարա-վոր են հաջող գու-գաղիպություններ, որոնց շնորհիվ կբացվեն նոր հեռանկարներ:

Ինչու - Որքան շուտ զբաղվեք կարելով գործերով, այնքան լավ: Հնարավորություն կունե-նաք շատ բան փոխել:

Փորձեք լուծել

Խնդիր N1

Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.g7-h8 a7:g7 2. h8:c3:e1:d6:c1x Խնդիր N2 1.a5-c3 b2:d4 2.h2-g3 h4:f2 3. g1:g5x

Խնդիր N2

Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Պատրաստեք Նշան ԱՆԱՎԵՐԴՅԱԸՆԸ Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկզբնավոր դի պատասխանները

Նախորդ համարի լուծումը:

Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Պատրաստեք Նշան ԱՆԱՎԵՐԴՅԱԸՆԸ Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան: Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 08.08.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950: Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հեռակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը՝ «02»-ին պարտադիր է: Զպատկիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խնդրությունները հեղինակների հետ գրագրությամբ չի վարում: Գովազդի պատասխանատու պատվիրատու է: